

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի Վաղարշապատի N 12 հիմն. դպրոց ՊՈԱԿ-ի դասվարի թափուր տեղի համար

Ուսուցչի վարձատրությունը՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարի :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1 ).

2. Փաստաթուղթ՝ (դիպլոմ) <<Հանրապետության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ.

3. Անձնագրի պատճեն

4. Ինքնակենսագրություն (Ձև 4 )

5. Մեկ լուսանկար (3x4 )չափի

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունք :

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը կկայանա 2020թ. սեպտեմբերի 30-ին, ժամը՝ 14.00, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 093 41-07-08 հեռախոսահամարով: